

ԳՆԵԼ ՄՈՒՂՆԵՑՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ, ՀՀ փաստարանների
պալատի անդամ-փաստարան

ՎԱՐՉԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԻ ԱՆՀՐԱԺԵՇԾՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԽԱՆԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ

Ներկայումս գործող իրավակարգավորումը ՀՀ վարչադատավարական գործընթացում բացառում է վերաբնության փուլը, ինչը մեր խորին համոզմամբ, անձանց՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով սահմանված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտում է։ Մեր նման եզրահանգումը պայմանավորված է ոչ միայն վերաբնության ինստիտուտի իրավակարգավորման բացակայությամբ, այլ նաև ստորև ներկայացվող գործոններով։

Թե՛ ՀՀ սահմանադրական դատարանը, թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, թե՛ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իրենց ակտերով արձանագրել են, որ անձի արդյունավետ դատական պաշտպանությունը ենթադրում է նաև անձի իրավունքների և /կամ/ պարտականությունների վերաբերյալ կայացված դատական ակտի բողոքարկելու հնարավորության առկայություն։

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր 909-րդ համագումարում 2004թ. դեկտեմբերի 15-ին ընդունել է Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ (2004) 20 հանձնարարականը¹։ Նշված հանձնարարականի 4-րդ (i) կետում ամրագրված է, որ վարչական ակտը վերանայող դատարանի որոշումը պետք է, գոնեւ կարևոր գործերով ենթակա լինի բողոքարկման վերադաս ատյան, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը ներպետական օրենսդրությանը համապատասխան ուղղակիորեն ենթակա է վերադաս ատյանին։

ՀՀ վարչադատավարական գործընթացում վերաբնության փուլի կարևորության հանգամանքին ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը իր 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշմամբ, որով վերջինս արձանագրել է. /մեջբերման

սկիզբ/ «Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում Սահմանադրության 92-րդ հոդվածի նշված մեկնաբանությունը դիտարկել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների համատեքստում։ Այս սահմանադրական դրույթների համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև օրենսդրի հայեցողությանն է բողնված վարչական արդարադատության շրջանակներում վերաբննիշ ատյանի ստեղծման հարցի լուծումը, այնուամենայնիվ, օրենսդրին իր այս հայեցողությունն իրացնելիս պետք է առաջնորդվի մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, տվյալ դեպքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ պաշտպանության և այդ իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ» (մեջբերման ավարտ)²։

Նշվածի համաձայն՝ ՀՀ սահմանադրական դատարանը ներկայացրել է այն ելակետային շափորչիները, որոնցով պետք է առաջնորդվի օրենսդրը դատական պաշտպանության միջնորդների իրավական ֆորմալիզացիայի ընթացքում (իրավաստեղծման գործընթացում) և, որպես նման շափորչիշ, առանձնացրել է դատական ակտի բողոքարկման հնարավորության իրացման կառուցակարգի առկայության անհրաժեշտությունը։

Նշված ելակետային հանգամանքի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը սահմա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նադրականության որոշման նկատառումով գնահատման առարկա է դարձել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին և 118-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված նորմերը, ինչի արդյունքում դրանք ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր:

Վարչադատավարական գործընթացում վերաբննության փուլի բացակայության պայմաններում ՀՀ սահմանադրական դատարանը արձանագրել է, որ վարչադատավարական գործընթացում վճռաբեկության փուլը իր իրավակարգավորմամբ պետք է էականորեն տարրերի քաղաքացիական գործընթացի վճռաբեկության փուլից: Մեր խորին համոզմամբ ՀՀ սահմանադրական դատարանի նշված մտահոգությունը առարկայագործի չէ. դրա հիմքում ընկած է անձանց իրավունքների և /կամ/ պարտականությունների վերաբերյալ կայացված դատական ակտերի բողոքարկման հնարավորության իրացման համար արդյունավետ կառուցակարգերի սահմանման անհրաժեշտությունը, ինչն իր հերթին երաշխիք է հանդիսանում ՀՀ սահմանադրության 18-րդ հոդվածով սահմանված յուրաքանչյուր ոքին՝ արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներով դատական պաշտպանության իրավունքի իրացման համար: Այլ կերպ ասած՝ վարչադատական գործընթացում վերաբննության փուլի բացակայության պայմաններում պետք է առկա լինի վճռաբեկության փուլի այնպիսի իրավակարգավորում, որը պայմաններ կստեղծի անձան՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի անքակտելի մասը, բաղադրիչը հանդիսացող դատական ակտի բողոքարկման հնարավորության իրացման համար:

Մասնավորապես, վերընշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը. (մեջբերման սկիզբ). «Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում վերաբննիշ վարույթի բացակայության պայմաններում վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոքի առնչությամբ նույն հիմքերի և ընդունելիության պայմանների սահմանումը, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում: Ստացվում է վարչական դատավարությունում քաղաքացիական դատավարության նորմերի մեխանիկական վերարտադրություն այն դեպքում, եթե առաջինում վերաբննիշ վարույթ գոյություն չունի: Ուրեմն՝ վարչական դատավարության մասնակիցների կողմից վարչա-

կան դատավարության մասնակիցների կողմից վարչական դատարանի ակտը վճռաբեկ դատարան բողոքարկելու կարգը, ներառյալ վճռաբեկ բողոքի թույլատրելիության հիմքերը, ինչպես նաև վճռաբեկ վարույթի կարգն այդ գործերով, պետք է սահմանվեն վարչական դատավարության օրենսգրքով՝ հղումներ ներառելով այլ օրենքներին միայն այն դեպքերում, եթե դրանք դուրս չեն գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից: Նման մոտեցումը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից» (մեջբերման ավարտ):

Ինչևէ, ՀՀ սահմանադրական դատարանի վերընշյալ որոշումից հետո «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ-99-Ն ՀՀ օրենքով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարվեցին լրացումներ՝ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլուխը լրացվեց 118.1-118.6-րդ հոդվածներով:

ՀՀ արդարադատության նախարարությունը, հավանություն տալով «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության եզրակացության նախագծին, նախագծի հիմնավորումների մեջ վկայակոչել է հետևյալ հանգամանքը. «Սույն օրինագծերի միջոցով Ազգային ժողովում ստեղծված աշխատանքային խումբն իրականացրել է ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՌ-780 որոշման եզրափակիչ մասի դրույթները, որոնցով....: Բացի վերը նշվածներից, իրավաչափ չի համարվում վերաբննիշ վարույթի բացակայության պայմաններում վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոքի առնչությամբ նույն հիմքերի և ընդունելիության պայմանների սահմանումը, որոնք կիրառվում են քաղաքացիական դատավարության նորմերի մեխանիկական վերարտադրություն այն դեպքում, եթե առաջինում վերաբննիշ վարույթ գոյություն չունի: Ուրեմն՝ վարչական դատավարության մասնակիցների կողմից վարչա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան դատարանի ակտը վճռաբեկ դատարան բողոքարկելու կարգը, ներառյալ՝ վճռաբեկ բողոքի բույլատրելիության հիմքերը, ինչպես նաև վճռաբեկ վարույթի կարգն այդ գործերով պետք է սահմանվեն հենց վարչական դատավարության օրենսգրքով և հղումներ ներառեն քաղաքացիական դատավարության նորմերին միայն այն դեպքում, եթե առանձնահատկություններ չեն պարունակում»:

Ըստ էության, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու համար որպես հիմնավորում վկայակոչվել է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 25-ի թիվ ՍԴ-780 որոշմամբ հայտնած դիրքորոշումը: Սա նշանակում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարվող լրացումներով պետք է սահմանվեր վարչադատավարական գործընթացի վճռաբեկության փուլի այնպիսի իրավակարգավորում, որը պայմաններ ստեղծեր անձանց՝ արդյունավետ միջոցներով դատական պաշտպանության իրավունքի անքաղցելի մասը, բաղադրիչը հանդիսացող դատական ակտի բողոքարկման հնարավորության իրացման համար:

Սակայն, թե՛ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված լրացումները իրենց իրավական ձևակերպումներով, թե՛ 2008 թվականի նոյեմբերից հետո (խոսքը վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման կայացումից հետո մինչ օրս ընկած ժամանակահատվածին) ձևավորված դատաիրավակիրառական պրակտիկան հավաստում են, որ խնդրուարկայի լուծման կապակցությամբ ոչ մի էական առաջընթաց չի արձանագրվել: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.3-րդ հոդվածով (վճռաբեկ բողոք բերելու հիմքերը) նորմերը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածով սահմանված նորմերի նույնությամբ վերարտադրումն են: Ավելին՝ գրեթե տարբերություն չկա նաև վճռաբեկ բողոքը ընդության ընդունելու ՀՀ վարչական դատավարության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով սահմանված հիմքերի միջև: Եթե դրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ վարչական գործերով բերված վճռաբեկ բողոքները վերադարձնելու հետ կապված հարցերը կարգավարվում են ՀՀ քաղաքացիական դատավարու-

թյան օրենսգրքով, ապա դժվար չել եղանակացնել, որ իրավական կարգավորման հարթությունում գրեթե ամեն ինչ, գոնե բովանդակային առումով, մնացել է նույնը:

Զննարկվող հարցի կապակցությամբ ամեն ինչ գրեթե նույնը մնալու վերաբերյալ իր դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ ՍԴ-873 որոշմամբ: Նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ կատարված փոփոխությունները համակարգային առումով ամբողջական չեն, չեն ապահովում և երաշխավորում վճռաբեկ դատարանում վարչական վարույթի իրականացման հստակ կարգն ու առանձնահատկությունները, չի գտնվել վարչական արդարադատության գործառնական և կառուցակարգային դատարանակազմական ամբողջական երաշխավորման արդյունավետ լուծում⁴:

Եվ, որ ամենակարևորն է, հենց ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վարչական դատարանի վերջնական դատական ակտերի դեմ բերված բողոքների վարույթ ընդունելու և վերադարձնելու վիճակագրությունն է վկայում, որ ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկայում ամեն ինչ մնացել է նույնը: Մասնավորապես, ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչության տրամադրած տվյալների վերլուծությունից բխում է, որ և 2008 թվականի, և 2009 թվականի ընթացքում, ինչպես նաև 2010 թվականի 1-ին կիսամյակում ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է ՀՀ վարչական դատարանի վերջնական դատական ակտերի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքների մոտ ուժություն տուկուր: Ըստ ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչության տրամադրած տվյալների՝ 2008 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի ընկած ժամանակահատվածում (11 ամսվա ընթացքում) ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ ներկայացված 223 վճռաբեկ բողոքից 172-ը վերադարձվել են, իսկ 51-ը՝ ընդունվել են վարույթ: 2008 թվականից հետո ընկած ժամանակահատվածում (խոսքը վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման և դրանից հետո ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելուց հետո ընկած ժամանակահատվածին) պատկերը նույնականացնելու համար կապահանջման պահանջման մեջ մնացել է նույնը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

եղել, մասնավորապես, 2009 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի 1-ին կիսամյակը ներառյալ ընկած ժամանակահատվածում ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ ներկայացված 681 վճռաբեկ բողոքից 538-ը վերադարձվել է, իսկ 143-ը ընդունվել է վարույք:

Նշված փիճակագրական տվյալները փաստում են ընդամենը մի բան. ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ 780 որոշման պահանջները չեն կատարվել և վարչադատավարական գործընթացի՝ ներկայում գործող երկաստիճան համակարգը չի ապահովում անձանց՝ արդյունավետ միջոցներով դատական պաշտպանության իրավունքի իրացումը. Սա նշանակում է, որ պետք է առաջարկվեն խնդրի համակարգային լուծումներ, որոնց մեկնարկը, մեր խորին համոզմամբ՝ պետք է տրվի վերաբննության փուլի հետ կապված հարցերը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում իրավական ֆորմալիզացիայի ենթարկմամբ: Այսօր, առավել քան իրատապ է վարչադատավարական գործընթացում վերաբննության փուլի նախատեսումը, քանի որ արդեն 3-րդ տարին է, ինչ մասնագիտացված՝ վարչական դատավարությունը լիարժեք չի իրացնում իր հիմնական առաքելությունը (անձանց հանրային սուրյեկտիվ իրավունքների պաշտպանության արդյունավետ կարգի սահմանում): Մեր հավաստմամբ դատավարական փոփոխությունները պետք է զուգորդվեն նաև ինստիտուցիոնալ փոփոխություններով, մասնավորապես, ՀՀ դատական համակարգում պետք է կազմավորել նոր՝ վարչական վերաբննիշ դատարաններ, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կազմում պետք է կազմավորել մասնագիտացված վարչական պալատ:

Մեր կարծիքով մասնագիտացված դատարանների ստեղծումը՝ բացառությամբ առանձին դեպքերի, իր հետ պետք է բերի մասնագիտացում թե՛ դատարանակազմական, թե՛ դատավարական ասպեկտներով: Այլ կերպ ասած՝ միայն առաջին ատյանի մակարդակով մասնագիտացում (համապատասխան դատավարական իրավակարգավորմամբ) խնդրի ոչ ամբողջական և հատվածական լուծում է: Մասնագիտացման հիմքում ընկած գործուները պահանջում են մասնագիտացում նաև վերին ատյանի օղակներում: Մասնագիտացված դատարանների ստեղծումն ինքնանպատակ չէ, որուա հիմքում ընկած է սոցիալական որոշակի

պահանջմունք և, դրանով պայմանավորված, խնդիրների և նպատակների ամբողջական համակարգ, որոնց իրացման և կյանքի կոչման նկատումով էլ ստեղծվում են համապատասխան մասնագիտացված դատարանները⁵: ՀՀ վարչական դատարանը և վարչադատավարական գործընթացը իր ընթացակարգային կարգավորմամբ իրավական կարգավորման կառուցակարգում ունեն իրենց ուրույն, համեստ, բայց և անփոխարինելի տեղը և դերը, մասնավորապես, վարչադատավարական գործընթացի միջոցով անձանց հանրային սուրյեկտիվ իրավունքների պաշտպանության նկատառումով վերահսկողություն է իրականացվում հանրային իշխանությամբ օժտված սուրյեկտների գործունեության նկատմամբ: Վարչական դատավարությունը, ի թիվս այլոց, իրավական արժեհամակարգի մեջ ընդգրկված իրավական այլ երևույթների հետ հանգուցալուծվում է ողջ իրավական գոյի մեկնակետում, այն է՝ իրավակարգի հաստատում:

Մենք լիովին կիսում ենք ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ 780 որոշման մեջ տեղ գտած հետևյալ տեսակետը. (մեջբերման սկիզբ) «Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով պահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, և այս դեպքում՝ դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: Հետևաբար, այդ ինստիտուտի բնականոն և լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործուները հստակ արտահայտված լինի տվյալ տեսակի գործերի քննության իրավասությամբ օժտված բոլոր դատական ատյաններում:

Ելմելով վերոհիշյալից՝ սահմանադրական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դատարանն արձանագրում է, որ վարչական մասնագիտացված արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքարկման միակ ատյանի վճռաբեկ դատարանի մատչելիությամբ և արդյունավետությամբ, այլ այդ իրավունքի արդյունավետությունը պայմանավորող կարևոր հանգամանք է նաև վճռաբեկ դատարանում մասնագիտացման գործոնի լիարժեք դրսերումը: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ դատարանում կարող է ունենալ երկու հիմնական դրսերում, այն է՝ գործերի քննությունը մասնագիտացված առանձին միավորի կողմից, և երկրորդ՝ գործերի քննության կազմակերպումը վարչական արդարադատության առանձնահատկություններին համապատասխան: Մինչդեռ վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննության կապակցությամբ մասնագիտացման գործոնի նշված երկու դրսերումներն ել որևէ կերպ արտահայտված չեն....: Սահմանադրական դատարանը գտնում է, որ մասնագիտացված վարչական դատարանի ակտերը չեն կարող վերանայվել մի դատարանի կողմից, որը չունի մասնագիտացված համապատասխան դատական կազմ: Սահմանադրության մեջ վճռաբեկ դատարանի պալատների գոյության երաշխիքի ամրագրումը կիմաստավորվի միայն այն դեպքում, եթե վճռաբեկ դատարանն ունենալիարժեք, այն է՝ գործն ըստ էության քննող և լուծող մասնագիտացված համապատասխան պալատ: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ վարույթում բացակայելու արդյունքում վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, հետևաբար նաև՝ վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքն իր ամբողջության մեջ խսրարվում է և զրկվում արդյունավետությունից» (մեջբերման ավարտ):

Ինչևէ, համաշխարհային փորձը վկայում է, որ վարչադատավարական գործընթացում վերաբերնության (համապատասխան վարչական վերաբերնի ատյանով (appeal administrative court)), ինչպես նաև վճռաբեկության (գերազույն վարչական դատարանով-supreme administrative court (որոշ երկրներում վարչական գործերով վերին դատական ատյանի անվանումը այլ է) փուլերը, կարևոր և անհրաժեշտ պայմաններ են վարչական

արդարադատության իրացման գործընթացում: Այլ կերպ ասած, մասնագիտացումը՝ որպես ամբողջական գործընթաց, իր իրացումն է գտնել նաև դատարանակազմական համատեքստում, ինչը հանգեցրել է համապատասխանարար վերաքննիչ և վճռաբեկ ատյանների կայացմանը: Թե՛ դատարանակազմական, թե՛ դատավարական հարցերի իրավական կարգավորման հետ կապված տարբեր երկրներում առկա են տարբեր մոտեցումներ, մասնավորապես, մի շարք երկրներում առկա են ինչպես վերաքննիչ, այնպես է գերազույն վարչական դատարաններ (օրինակ, Գերմանիա, Հունաստան, Ռուսաստան, Մոլդովա, Բուլղարիա), իսկ որոշ երկրներում մասնագիտացված առանձին գերազույն դատարաններ առկա չեն, սակայն բարձրագույն դատական ատյանի կազմում գործում են վարչական գործերով պալատներ, դեպարտամենտներ (Վրաստան, Էստոնիա, Սերբիա): Որոշ երկրներում մասնագիտացումը տեղ է գտնում նաև հենց գերազույն վարչական դատարանում (օրինակ՝ Լեհաստան), իսկ մի շարք երկրներում վարչական արդարադատության գերազույն ատյանը կվագիդատական սուբյեկտ է (օրինակ՝ Ֆրանսիա, Իտալիա, Թուրքիա):

Մասնավորապես, Գերմանիայի «Վարչադատական գործընթացի մասին» Գերմանիայի Դաշնային օրենքով ամբողջական բաժիններ (բաժին 12, 13) են նվիրված վարչադատավարական գործընթացի վերաբերնության և վճռաբեկության փուլի հետ կապված հարցերին⁶: Ուկրաինայի վարչական դատավարության օրենսգրքով նույնպես ամբողջական գլուխներ (4-րդ բաժնի 1-2-րդ գլուխներ) են հատկացված վերաբերնության և վճռաբեկության փուլերին⁷: «Վարչական դատարանի մասին» Մոլդովայի օրենքի 6-րդ հոդվածով սահմանված նորմի համաձայն՝ Մոլդովայում գործում են վերաբերնիչ պալատներ և Բարձրագույն դատական պալատ⁸: Վարչադատավարական գործընթացի վերաբերնության և վճռաբեկության փուլերի հետ կապված նույնարդումական կարգավորում է առկա նաև Հունաստանում, մասնավորապես, այնտեղ գործում են վերաքննիչ վարչական դատարաններ և Գերազույն վարչական դատարան⁹: Լեհաստանում նույնպես վարչադատավարական գործընթացում առկա են վերաբերնության և վճռաբեկության փուլերը համապատասխան իրավակարգավորմանը: Լեհաստանում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նույնիսկ Գերազույն վարչական դատարանը բաժանվում է երեք պալատների՝ Ֆինանսական պալատ, տնտեսական պալատ և ընդհանուր վարչական գործերով պալատ¹⁰: Էստոնիայում վարչադատավարական գործընթացը կարգավորող Վարչական դատարանի ընթացակարգի օրենսգրքի¹¹ (Code of Administrative Court Procedure) 5-6-րդ գլուխներով ամրագրված նորմերը համապատասխանաբար ուղղված են վարչադատավարական գործընթացի վերաբնության և վճռաբեկության փուլերի իրավակարգավորմանը: Ավելին՝ Էստոնիայի դատարանակազմության հետ կապված հարցերը կարգավորող «Դատարանների մասին» օրենքի 18-րդ, 22-րդ, 28-րդ հոդվածներով ամրագրված նորմերը սահմանում են, որ Էստոնիայում գործում են վարչական դատարաններ, շրջանային վերաբննիշ դատարաններ, որոնք քննում են նաև վարչական դատարանների ակտերի դեմ ներկայացված վարչական վերաբննիշ բողոքները, ինչպես նաև Գերազույն դատարանը՝ իր երեք պալատներով (քաղաքացիական, քրեական և վարչական):¹²

Ֆրանսիայում ևս առկա են վերաբննիշ վարչական դատարաններ, իսկ վարչական գործերով վերին ատյանը հանդիսանում է Պետական խորհուրդը¹³: Թուրքիայի «Շրջանային վարչական դատարանների, վարչական և հարկային դատարանների հաստատման և գործունեության մասին» 06.01.1982թ. թիվ 2576 և «Պետական խորհրդի մասին» 06.01.1982թ. թիվ 2575 օրենքների ուսումնասիրությունից բխում է, որ վարչական դատարանների մասնագիտացվածության հարցում Թուրքիան, որոշակի վերապահումներով, ինպիմենտացիայի է ենթարկել վարչադատավարական ֆրանսիական մոդելը¹⁴:

Իտալիայում նույնպես վարչական արդարադատության մասնագիտացումը կրում է ամբողջական բնույթ, մասնավորապես, Իտալիայում բացի առաջին ատյանի մասնագիտացված վարչական դատարաններից՝ առկա են վերաբննիշ ատյաններ, ինչպես նաև վերին ատյան, որը, ինչպես ֆրանսիայում, կոչվում է Պետական խորհուրդ: Իտալիայում առանձին հանրային իրավական վեճերով վարչական արդարադատություն է իրականացնում Իտալիայի հաշվից պալատը¹⁵:

Հարկ է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ, որոշ երկրներում դատարանակազ-

մական առումով վարչական վերաբննիշ դատարաններ առկա չեն, սակայն վճռարեկ փուլի հետ կապված դատավարական կարգավորումն այնպիսին է, որ անձանց հնարավորություն է տալիս լիարժեք իրացնել վարչական դատարանի ակտերի բողոքարկման իրավունքը: Նման երկիր է, օրինակ, Լիտվան, որի «Դատարանների մասին» օրենքի 4-րդ գլխի¹⁶ 1-2-րդ բաժիններով ամրագրված նորմերի բառացի մեկնաբանության և համակարգային վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ Գերազույն վարչական դատարանը շրջանային վարչական դատարանների համար հանդիսանում է վերաբննիշ ասյան:

Հարկ է նշել, որ հանրային իրավահարաբերություններից բխող վեճերով դատավարության վերաբննության և վճռաբեկության փուլեր առկա են նաև ընդհանուր իրավունքի համակարգի երկրներում (ճշշտ է ԱՄՆ-ում ընդհանուր վարչական դատարաններ որպես այդպիսին գոյություն չունեն, սակայն ԱՄՆ-ում վարչական գործակալությունների կազմում գործում են վարչական դատավորներ, որոնք մասնագիտացված են կոնկրետ ոլորտում հանրային իրավական վեճերի լուծման մեջ և նրանց կողմից կայացված ակտերը, որպես կանոն, ենթակա են դատական վերանայման¹⁷): Ինչևէ, ԱՄՆ-ում դաշնային մակարդակով առկա են 13 վերաբննիշ դատարաններ, որտեղ վեճերի քննությունն իրականացվում է վերաբննիշ գործընթացի դաշնային կանոններով¹⁸: Վերաբննիշ դատարաններ բողոքարկվում են մասնագիտացված դաշնային դատարանների (այս դաշնային դատարանները մեծամասամբ քննում են հանրային իրավահարաբերություններից բխող վեճեր, օրինակ՝ ԱՄՆ-ի հարկային դատարան, Դաշնային կառավարությանը դեմ ներկայացվող պահանջները քննող դատարան) և շրջանային դաշնային դատարանների դատական ակտերը: Որպես կանոն եռատիճան դատական համակարգ է առկա նաև ԱՄՆ-ի նահանգներում¹⁹: Դաշնային վերաբննիշ դատարանների դատական ակտերը ենթակա են բողոքարկման ԱՄՆ գերազույն դատարան, որտեղ գործերի (այդ բվում՝ վարչական գործերի) քննությունն իրականացվում է ԱՄՆ գերազույն դատարանի կանոններով (Rules of the Supreme Court of the United States)²⁰:

Ինչևէ, ելմելով վերագրյալից ևս կարող ենք

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Եզրահանգել, որ մասնագիտացված վարչական արդարադատությունը ենթադրում է մասնագիտացում ոչ միայն առաջին ատյանի վարչական դատարանի ստեղծմամբ (համապատասխան դատավարական կարգավորմամբ), այլ նաև անձանց՝ դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրացման համար վերաքննիչ և վճռաբեկ ատյանների նախատեսում։ Մակայն նշված դատական ատյանների իրավական ֆորմալիզացիային զուգահեռ պետք է նախատեսվեն վերաքննության և վճռաբեկության փուլերի՝ որպես վարչադատական գործընթացի փուլերի, այնպիսի իրավակարգավորում, որը անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համար կլինի արդյունավետ։

Վերոգրյալից ելնելով՝ մենք գտնում ենք, որ հայաստանյան իրականությունում վարչադատավարական իրավական պաշտպանության արդյունավետության համար վերաքննության փուլի իրավական ֆորմալիզացիան թե՛ դատավարական, թե՛ դատարանակազմական առումով առավել քան իրատապ է։ Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում պետք է կատարվեն լրացումներ, ինչի արդյունքում կնախատեսվի առանձին գլուխ, որով ամրագրված նորմերն ուղղված կլինեն առաջին ատյանի վարչական դատարանի դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների քննության հետ կապված հարաբերությունների կարգավորմանը։ Նշված դրույթներով պետք է կարգավորման ենթարկվեն վերաքննիչ բողոք ներկայացնող անձանց շրջանակի, վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետների, կարգի, վերաքննիչ բողոքի բովանդակության, այն վարույթ ընդունելու, վերադարձնելու, վերաքննիչ բողոքի քննության կարգի, վարչական վերաքննիչ դատարանի լիազորությունների, բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտերին ներկայացվող պահանջների հետ կապված հարցերը։

Նշված հարցերի կարգավորման համար ելակետային պետք է հանդիսանա այն իրողությունը, որ այդ ամենն արվելու է որոշակի նպատակի իրացման և սոցիալիրավական պրակտիկայում դրա առարկայացման համար, այն է՝ անձանց՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչը հանդիսացող դատական ակտի բողոքարկման հնարավորության

իրացման համար գործնական իրավական կառուցակարգի առկայություն։

Սակայն միայն դատավարական փոփոխությունները մեր կարծիքով բավարար չեն նշված նպատակի իրացման համար, դրա լուծման համար անհրաժեշտ են համակարգային, ամբողջական լուծումներ, ինչը ենթադրում է նաև վարչական դատարանների՝ դատարանակազմական առումով ռեֆորմացիա։ Դատարանակազմական առումով խնդրի լուծումը կայանում է նրանում, որ մասնագիտացման գործընթացը պետք է ավարտին հասցվի և Հայաստանի Հանրապետությունում պետք է ստեղծվի վարչական վերաքննիչ ատյան, ինչպես նաև վճռաբեկ դատարանում առանձին-առանձին մասնագիտացված վարչական և քաղաքացիական պալատներ՝ ներկայումս գործող քաղաքացիական և վարչական պալատի փոխարեն։ Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել օրենսդրական բարեփոխումների ամբողջական փաթեթ, որի ընդունման դեպքում վարչադատավարական գործընթացի վերաքննության փուլը և մասնագիտացված վերաքննիչ դատարանները կդառնան իրողություն։

Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը լրացնել 19.1 գիսով (վարույթը վերաբերնիշ դատարանում), որով վարչադատավարական գործընթացի վերաքննության փուլը ենթարկված է ամբողջական կարգավորման։

Շրջանառության մեջ է դրված նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի 1-ին և 6-րդ հոդվածներով ամրագրված նորմերով նախատեսվում է փոփոխել ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմը, ինչպես նաև նշված օրենսգիրքը լրացնել 41.1 հոդվածով, ըստ որոնց՝ ՀՀ-ում պետք է գործի մասնագիտացված վերաքննիչ վարչական դատարան։

Մեր համոզմամբ վարչադատական կառուցակարգի ամբողջական մասնագիտացումը կարելի է ավարտին հասցնել օրենսդրական բարեփոխումների ներկայային փուլում և վերաքննիչ վար-

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

շական դատարանների դատական ակտերի դեմ համար ՀՀ վճռաբեկ դատարանում ստեղծել մասներկայացված վճռաբեկ բողոքների քննության նազիտացված վարչական պալատ:

¹ Տե՛ս Հղումն ըստ համացանցի [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec\(2004\)20&Language=lanEnglish&Site=CM&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec(2004)20&Language=lanEnglish&Site=CM&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383) կայքի 03.03.2010թ. դրույթամբ:

² Տե՛ս Հղումն ըստ համացանցի <http://www.concourt.am/armenian/decisions/common/2008/pdf/sdv-780.pdf> կայքի 08.08.2010թ. դրույթամբ:

³ Տե՛ս ՀՀՊՏ N 23 (690), 06.05.09:

⁴ Տե՛ս Հղումն ըստ համացանցի <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-873.pdf> կայքի 01.09.2010թ. դրույթամբ:

⁵ Տե՛ս Մասնագիտացված դատարանների ստեղծման, դրանց հիմքում ընկած պայմանների, դրանց խորհրդական մասին ավելի մանրամասն տե՛ս Աֆանասьев С. Ф., Зайцев А. И. Об истории специализации юрисдикционных органов // Правоведение. 2002. № 2 (241). С. 135-143.

⁶ Տե՛ս Административное-процессуальное право Германии: закон об административном производстве, закон об административно-судебном процессе, законодательство об исполнении административных решений: пер. с нем. / В. Бергманн, М.: Волтерс Клувер, 2007. С. 140-151.

⁷ Տե՛ս Հղումն ըստ համացանցի www.audiozakon.com.ua կայքի 01.07.2010թ. դրույթամբ:

⁸ Տե՛ս Հղումն ըստ համացանցի http://gov.gov.md/www.gov.md/file/cadrul_juridic/ru/ Закон об административном суде.pdf կայքի 01.07.2010թ. դրույթամբ:

⁹ Տե՛ս Հղումն ըստ համացանցի http://en.wikipedia.org/wiki/Administrative_courts_in_Greece կայքի 06.09.2010թ. դրույթամբ:

¹⁰ Տե՛ս Հղումն ըստ համացանցի http://en.wikipedia.org/wiki/Supreme_Administrative_Court_of_the_Republic_of_Poland կայքի 06.09.2010թ. դրույթամբ:

¹¹ Տե՛ս Հղումն ըստ համացանցի <http://www.legaltext.ee/en/andmebaas/tekst.asp?loc=text&dok=X30054K8&keel=en&pg=1&ptyyp=RT&tyyp=X&query=%Court> կայքի 04.09.2010թ. դրույթամբ:

¹² Տե՛ս Հղումն ըստ համացանցի <http://www.legislationonline.org/documents/action/popup/id/5731> կայքի 03.09.2010թ. դրույթամբ:

¹³ Տե՛ս Դրա վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Маклаков В.В. Административная юстиция во Франции. Перевод/РАН. ИНИОН, М., 2006. С. 12-18.

¹⁴ Տե՛ս Հղումն ըստ համացանցի <http://www.danistay.gov.tr/eng/index.html>և http://www.legalisplatform.net/hukuk_metinleri/2575%20Nr.%20Code.pdf կայքերի 03.09.2010թ. դրույթամբ:

¹⁵ Տե՛ս Бочарников Ю. Ф. (Юрий Фабиевич). Конституционно-правовой статус органов административной юстиции Италии :Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2007. С. 10, 14-16.

¹⁶ Տե՛ս Հղումն ըստ համացանցի http://www3.lrs.lt/pls/inter2/dokpaieska.showdoc_l?p_id=216134 կայքի 03.09.2010թ. դրույթամբ:

¹⁷ Տե՛ս Դրա վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Берман У. Правовая система США. 3-й выпуск. Новая юстиция, 2007. С. 339-349.

¹⁸ Տե՛ս ԱՍՆ-ի ողջ տարածքը բաժանվում է 13 շրջանների, որոնց մեջ մտնում են համապատասխան նահանգների տարածքները, ինչով էլ պայմանավորված դաշնային վերաբերիչ դատարանների թիվը նույնական հասնում է 13-ի: Այդ ամենը սահմանված է ԱՍՆ-ի միացյալ նահանգների օրենքի 28-րդ տիտղոսի, 1-ին մասի 3-րդ գլուխ 48-րդ պարագրաֆի a/ մասի դրույթով (U.S. Code Title 28, Part 1, Chapter 3, « 48)- հղումն ըստ համացանցի http://www.law.cornell.edu/uscode/28/uscc_28_00000048—000-.html կայքի 05.09.2010թ. դրույթամբ:

¹⁹ Տե՛ս Նշված կանոնների ամբողջական տեքստին կարելի է ծանոթանալ համացանցի http://en.wikipedia.org/wiki/Federal_Rules_of_Appellate_Procedure կայքում, հղումը 01.09.2009թ. դրույթամբ:

²⁰ Տե՛ս ԱՍՆ դատական համակարգի կառուցվածքի մասին տե՛ս Բерман У. Правовая система США. 3-й выпуск. Новая юстиция, 2007. С. 1208, ինչպես նաև Ֆրիդմեն Լ. Введение в американское право: Пер. с англ./Под ред. Калантаровой М. М.: Прогресс, 1992. С. 51-55:

²¹ Տե՛ս Նշված կանոնների ամբողջական տեքստին կարելի է ծանոթանալ համացանցի <http://www.supremecourt.gov/ctrules/2010RulesoftheCourt.pdf> կայքում, հղումը 01.09.2010թ. դրույթամբ: